

**ԲԱՐԴ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԴԻՄԱՎՈՐ
ԲԱՅԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՆԵՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

ԱՐՏԱՇԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ

Լեզվի շարահյուսական համակարգի ուսումնասիրության կարե-վոր խնդիրներից է տարբեր միավորների կապակցման միջոցների ու եղանակների քննությունը: Դրանք ուսումնասիրելու համար առաջին հերթին անհրաժեշտ է հստակ տարբերակել կապակցման միջոցները եղանակներից: Գ. Ջահուկյանը գրում է. «Շարահյուսական կապակցության միջոցների և եղանակների միջև ոչ միշտ է հստակ տարբերություն անցկացվում, մինչդեռ առաջին դեպքում խոսքը գնում է այն մասին, թե ի՞նչ է օգտագործվում լեզվական միավորների կապակցության համար, երկրորդ դեպքում՝ այն մասին, թե ինչպե՞ս (ինչ ձևով) է այն օգտագործվում»¹: Պարզ նախադասության բաղադրիչ միավորների շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները ավելի հստակ են առանձնացվում: Ժամանակակից հայերենի համար որպես կապակցման միջոցներ հիմնականում նշվում են *բառաձևերը, կապերն* ու *շաղկապները, շարադասությունը* և *հնչերանգը*, իսկ որպես կապակցման եղանակներ՝ *համաձայնությունը, կառավարումը (խնդրառությունը), առդրությունը*²: Որոշ տարակարծություններ կան այս եղանակներից յուրաքանչյուրի տարբեր հատկանիշների վերաբերյալ, բայց ընդհանուր առմամբ սրանք տարբերվում են կապակցման միջոցներից: Բարդ նախադասության բաղադրիչների կապակցմանը վերաբերող քննություններում նման հստակություն չկա:

Շարահյուսական կապակցման միջոցներն ու եղանակները ուսումնասիրելու համար նախ անհրաժեշտ է առանձնացնել լեզվական այն միավորները կամ միջավայրերը, որոնցում կիրառվում ու դրսևորվում են դրանք: Այս հարցի մասին Գ. Ջահուկյանը հետևյալն է գրում. «...շարահյուսության քննության առարկան են շարույթը, նախադասությունը և տեքստը: Այստեղից հասկանալի է դառնում, որ շարահյուսական կապակցության միջոցները երեք կարգի են՝ ներշարույթային, ներնախադասական և ներտեքստային: Ներշարույթային միջոցները

¹ Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, Եր., 2003, էջ 85:

² Կա նաև կապակցման մեկ այլ եղանակ՝ կախումը, որը սովորաբար համարվում է համաձայնության մի դրսևորում (տե՛ս Ա. Սարգսյան, Ժամանակակից հայերենի շարահյուսական կապակցման մի եղանակի մասին // Լեզու և լեզվաբանություն, 2015, №1-2 (13), էջ 35-44):

բառերի, ավելի ճիշտ բառաձևի (ներառյալ վերլուծական միջոցները)՝ շարույթի կազմում կապակցվելու միջոցներն են: Ներնախադասական միջոցները շարույթների՝ պարզ նախադասության և նախադասությունների՝ բարդ նախադասության կազմում կապակցվելու միջոցներն են: Վերջապես ներտեքստային միջոցները նախադասությունների և ավելի բարձր միավորների՝ տեքստի կազմում կապակցվելու միջոցներն են»³: Մրանցից յուրաքանչյուրը առանձին ուսումնասիրության նյութ է: Մենք այստեղ կանդրադառնանք միայն ներնախադասական կապակցման եղանակներից մեկի դրսևորմանը, որն առնչվում է բարդ նախադասությունների բաղադրիչների կապակցմանը:

Բարդ նախադասության բաղադրիչների կապակցումը ժամանակակից հայերենում կարող է իրականանալ բառական և ոչ բառական միջոցներով: Բառական միջոցներն են շաղկապները, հարաբերական դերանունները, հարաբերյալները, իսկ ոչ բառական միջոցներն են շարադասությունը և հնչերանգը: Որպես բարդ նախադասության բաղադրիչների կապակցման եղանակ կարող է գործել համաձայնությունը, սակայն այն միակ եղանակը չէ, և հենց այդ խնդրին էլ ցանկանում ենք անդրադառնալ:

Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման համար գրաբարում և աշխարհաբարում ընդհանուր առմամբ կիրառվում են համանման միջոցներ ու եղանակներ: Գրաբարի բարդ ստորադասական նախադասությունները քննելիս Էդ. Մկրտչյանը գրում է. «Բաղադրիչների կապակցության բառական միջոցներն են ստորադասական շաղկապները, հարաբերականներն ու հարաբերյալները, իսկ ոչ բառական միջոցներն են հնչերանգը, բաղադրիչների շարադասությունը և նրանց եղանակաժամանակային ձևերի հարաբերակցությունը»⁴: Միջին հայերենում էլ բարդ նախադասության բաղադրիչների կապակցման օրինաչափություններն ընդհանուր առմամբ նույնն են, թեև կան մի շարք անմիօրինակություններ: Մասնավորապես մի շարք դեպքերում խախտվում է *ոչ* հարաբերականի և հարաբերյալի միջև գործող թվային համաձայնությունը: Դա հատկապես դրսևորվում է որոշիչ երկրորդականների կապակցության դեպքում: Այդ անհամաձայնությունը այնքան գերիշխող է, որ միջին հայերենին նվիրված ուսումնասիրության մեջ օրինաչափը անհամաձայնությունն է համարվում. «Եվ եթե միջին հայերենից ավանդված տեքստերում հանդիպում են դեպքեր, երբ *ոչոչ*-ը որպես հարաբերական՝ լրիվ համաձայնում է իր որոշյալի հետ, ապա դրանք մաքուր գրաբար արտահայտություններ են»⁵: *Ոչ*-ի և հարաբերյալի թվային համաձայնությանը գրաբարի քերականներից շատերն են անդրադարձել՝ Հովհաննես Հովսեփ, Մխիթար Սեբաստացի,

³ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 86:

⁴ Էդ. Մկրտչյան, Գրաբարի դասընթաց, Եր., 2008, էջ 197:

⁵ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, Եր., 1975, էջ 201:

Պաղդասար Դպիր, Միքայել Չամչյան, Վրթանես Չալըխյան, Արսեն Այտընյանը, Արսեն Բագրատունին և այլք:

Գրաբարի շարահյուսական համակարգը բավականին հանգամանորեն ուսումնասիրել է Ստ. Մալխասյանցը «Գրաբարի համաձայնությունը» աշխատության մեջ: Նա առանձնացնում է պարզ նախադասության անդամների և բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների կապակցումը: Առաջինը քննում է «Համաձայնություն» բաժնում, իսկ երկրորդը՝ «Համադրություն» բաժնում՝ նշելով. «Համաձայնութեան այն մասը, որ աւանդում է բաղադրեալ նախադասութեան կազմութեան կանոններ՝ կոչւում է *համադրություն*»⁶: Ստ. Պալասանյանը ևս «Գործնական քերականություն հայերէն լեզուի» գրքի երկրորդ հատորում, որը վերնագրված է «Համաձայնություն»⁷, քննել է գրաբարի շարահյուսությունը, որում և բաղադրիչ նախադասությունների կապակցմանն առնչվող խնդիրներ:

Նշված և այլ հեղինակների կարծիքներին այստեղ չենք անդրադառնում, քանի որ նրանք հիմնականում ներկայացրել են հարաբերյալի և հարաբերականի թվային համաձայնությունը, իսկ մենք ցանկանում ենք խոսել բարդ նախադասության բաղադրիչների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային հարաբերակցությանն առնչվող մի խնդրի մասին:

Բարդ նախադասության բաղադրիչների միջև հնարավոր համաձայնական կապը դրսևորվում է երկու ձևով՝ *թվային* և *եղանակաժամանակային*: *Թվային* համաձայնություն կարող է լինել հարաբերականի և հարաբերյալի (լայն առումով) միջև: *Եղանակաժամանակային* համաձայնություն կարող է լինել բարդ նախադասության բաղադրիչների բայ-ստորոգյալների միջև: Հ. Պետրոսյանը բարդ նախադասության բաղադրիչների կապակցումը բնութագրելիս հպանցիկ նշում է եղանակաժամանակային հարաբերակցությունը: Նա գրում է. «Կապակցությունը դրսևորվում է շղկապներով, շղկապական բառերով, հնչերանգով, եղանակաժամանակային ձևերի հարաբերակցությամբ, շարադասությամբ և այլ միջոցներով»⁸: Վ. Առաքելյանը ևս բարդ նախադասությունը քննելիս անդրադառնում է եղանակաժամանակային ձևերի դերին. «Որոշ բարդ նախադասության առանձին մասերի կապակցության մեջ դեր են կատարում բայերի եղանակներն ու ժամանակները. այսպես՝ նպատակի պարագայական նախադասությունները կիրառվում են ըղձական եղանակով»⁹:

Բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչների

⁶ Ստ. Մալխասեանց, Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, էջ 119:

⁷ Տե՛ս Ստ. Պալասանեան, Գործնական քերականություն հայերէն լեզուի, հատոր երկրորդ, Համաձայնություն, Թիֆլիզ, 1869:

⁸ Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 134:

⁹ Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հատոր Բ, Եր., 1964, էջ 85:

կապակցումը համեմատաբար ծավալուն քննել է Գ. Գարեգինյանը: Նա կարևորում է բաղադրիչ նախադասությունների դիմավոր բայերի քերականական հատկանիշների դերը կապակցման գործում. «Բարդ ստորադասական նախադասությունների բաղադրիչները գրեթե բացառապես ձևավորվում են բայական ստորոգմամբ, հետևաբար դիմավոր բայերի համապատասխան եղանակների և ժամանակային ձևերի հարաբերակցությունը կառուցվածքային և կապակցական արժեք է ստանում: Նայած կառուցվածքին և կապակցության միջոցներին, բայական եղանակների և ժամանակների գործածությունը կարող է լինել *ազատ* և *ոչ ազատ*, այսինքն *պարտադրված*: Ըստ որում պետք է տարբերակել եղանակային ձևերի գործածության ազատությունը ժամանակային ձևերի գործածության ազատությունից»¹⁰: Եղանակների ու ժամանակների ազատ և պարտադրված լինելու մասին գրելիս Գ. Գարեգինյանը տողատակում նաև նշում է. «Այս հարցը բազմակողմանի և լուրջ ուսումնասիրության կարոտ է»:

Այսպիսով՝ մի բան պարզ է, որ որոշակի դեպքերում բարդ նախադասության բաղադրիչների բայ-ստորոգյալների միջև եղանակաժամանակային որոշակի հարաբերակցություն է լինում, և եղանակների ու ժամանակների գործածությունը լինում է ազատ և ոչ ազատ: Հավելենք, որ ոչ ազատ գործածությունը տարբեր դրսևորումներ ունի: Այդ հարցը քննելու համար առաջին հերթին հստակեցնենք, թե որ հարաբերակցումն ենք համարում համաձայնական:

Բարդ նախադասության բաղադրիչների բայ-ստորոգյալների (և առհասարակ կապակցվող միավորների) միջև դրսևորվող համաձայնական կապ մենք առկա ենք համարում միայն այն դեպքում, երբ այդ կապը երկկողմանիորեն պարտադրված է: Այսինքն՝ դեռ բավարար չէ, որ երկու ստորոգյալները դրված լինեն եղանակաժամանակային միևնույն կարգով: Պետք է երկուսի ընդհանուր կարգը փոխադարձաբար պարտադրված լինի: Օրինակ՝ *Երբ տղան գնաց, նրանք աշխատանքը ավարտեցին* նախադասության մեջ *գնաց* և *ավարտեցին* ստորոգյալներն արտահայտված են սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևով: Սակայն երկրորդականի ստորոգյալի հետ գերադաս նախադասության մեջ հնարավոր է նաև սահմանական եղանակի այլ ժամանակաձևերով, ինչպես նաև հարկադրական եղանակի անցյալով ստորոգյալների կիրառություն, ինչպես՝ *Երբ տղան գնաց, նրանք աշխատանքը ավարտել էին*. *Երբ տղան գնաց, նրանք աշխատանքը ավարտում էին*. *Երբ տղան գնաց, նրանք աշխատանքը պիտի ավարտեին* (հարկադրականի ձևն այս դեպքում կիրառվել է ապառնու իմաստով՝ *ուր որ է կավարտեին*, առանց անհրաժեշտության շեշտման, որն առավել բնորոշ է խոսակցական լեզվին): Հետևաբար այս դեպքում հա-

¹⁰ Գ. Գարեգինյան, Ժամանակակից հայոց լեզու: Բարդ նախադասություն, Եր., 1991, էջ 121:

ամաձայնությունն իրականանում է միայն *ժամանակի* կարգով, բայց ոչ եղանակով կամ ժամանակաձևով, քանի որ հնարավոր էր կիրառել միևնույն եղանակի *անցյալի* տարբեր ժամանակաձևեր, ինչպես նաև տարբեր եղանակների *անցյալի* ձևեր: Ուրեմն միևնույն ժամանակաձևի կիրառությունը, որն առկա է *Երբ տղան գնաց, նրանք աշխատանքը ավարտեցին* նախադասության բաղադրիչներում, համաձայնության հետևանք չէ:

Գ. Ջահուկյանը, բնորոշելով համաձայնությունը (երկկողմանի կախումը), հարաբերականի և հարաբերյալի համաձայնությունը վերապահումով է ընդունում: Նա գրում է. «Կախման մեջ դնող և կախման մեջ դրվող անդամների ձևավորումը ընդհանուր քերականական կարգերին հատուկ նիշերով կոչվում է համաձայնություն: Այս եղանակին մոտ է այն դեպքը, երբ հարաբերական բառին գլխավոր նախադասության մեջ համապատասխանում է հարաբերյալը»¹¹: Բարդ նախադասության բաղադրիչների բայ-ստորոգյալների եղանակաժամանակային համաձայնական կապը քննելու համար անհրաժեշտ է պարզել, թե տեսականորեն դրանց ինչ զուգորդումներ են հնարավոր, և գործնականում դրանք բոլորն էլ հանդիպո՞ւմ են, թե՞ ոչ:

Եթե նկատի ունենանք կապակցվող միայն երկու բաղադրիչ, ապա նրանց բայ-ստորոգյալների միջև տեսականորեն հնարավոր են եղանակաժամանակային հետևյալ զուգորդումները.

ա) երկու ստորոգյալներն արտահայտված են միևնույն եղանակի միևնույն ժամանակաձևերով.

բ) երկու ստորոգյալներն արտահայտված են միևնույն եղանակի տարբեր ժամանակաձևերով.

գ) երկու ստորոգյալներն արտահայտված են տարբեր եղանակների նույն ժամանակով.

դ) երկու ստորոգյալներն արտահայտված են տարբեր եղանակների տարբեր ժամանակներով:

Եթե եղանակաժամանակային միևնույն կարգն ունենալը պարտադրված է, ապա առաջին դեպքում բաղադրիչների բայ-ստորոգյալների միջև կլինի և՛ եղանակով, և՛ ժամանակաձևով համաձայնություն, երկրորդ դեպքում՝ եղանակով համաձայնություն, երրորդ դեպքում՝ ժամանակով (ոչ ժամանակաձևով) համաձայնություն, իսկ չորրորդ դեպքում համաձայնություն չի դրսևորվի: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեսականորեն հնարավոր այս բոլոր զուգորդումները գործնականում հանդիպում են ժամանակակից հայերենում:

Մենք այստեղ ցանկանում ենք անդրադառնալ այն կառույցներին, որոնցում բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալները դրված են տարբեր եղանակների տարբեր ժամանակներով, այսինքն

¹¹ Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 87:

եղանակաժամանակային համաձայնություն նրանց միջև չկա: Բայ-ստորոգյալների եղանակաժամանակային հարաբերակցության առումով այսպիսի կառույցները հնարավոր է բաժանել երկու խմբի.

ա) բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալները ազատորեն կարող են արտահայտվել տարբեր եղանակների տարբեր ժամանակներով,

բ) բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալները թեև արտահայտված են տարբեր եղանակների տարբեր ժամանակներով, բայց դրանց կիրառությունը փոխկապակցված է և ազատ չէ:

Օրինակ՝ *Նա գնում է, որ սովորի* նախադասության գերադաս բաղադրիչի *գնում է* ստորոգյալն արտահայտված է սահմանական եղանակի անկատար ներկայով, իսկ երկրորդական բաղադրիչի *սովորի* ստորոգյալն արտահայտված է ըղձական եղանակի ապառնիով: Թվում է, թե այս դեպքում կապակցությունը համաձայնական առումով ազատ է, այսինքն՝ կարող են գործածվել տարբեր եղանակների տարբեր ժամանակներով բայ-ստորոգյալներ: Սակայն այս և մի շարք այլ կառույցներում բայ-ստորոգյալների՝ տարբեր եղանակների տարբեր, բայց որոշակի ժամանակներով դրվելը կառույցի ձևավորման պարտադիր պայման է: Այս իրողությունը տարբերվում է համաձայնությունից, բայց նաև տարբեր է ազատ կապակցումից:

Համաձայնությունից տարբերվում է նրանով, որ երկու եզրերը համաձայնական կապակցում ստեղծելու համար անհրաժեշտ քերականական միևնույն կարգով չեն դրվում, իսկ ազատ կապակցությունից տարբերվում են նրանով, որ կան որոշակի սահմանափակումներ: Մեր կարծիքով, սա մի առանձին եղանակ է, որն առաջարկում ենք անվանել *համաձայնեցում* և տարբերակել *համաձայնությունից*: Այսինքն՝ *համաձայնության* դեպքում կապակցվող միավորներն ունենում են իմաստային կամ քերականական դրսևորում ունեցող պարտադրված ընդհանուր կարգ կամ կարգեր, իսկ *համաձայնեցման* դեպքում՝ տարբեր՝ ոչ ընդհանուր, սակայն պարտադրված կարգեր: Ժամանակակից հայերենում համաձայնեցումը որպես կապակցման եղանակ գործում է բարդ նախադասության բաղադրիչների բայ-ստորոգյալների միջև:

Համաձայնեցումը հիմնականում դրսևորվում է պարագա որոշ երկրորդականներով բարդ ստորադասական նախադասություններում, ինչպես նաև որոշ տեսակների համադասականներում: Համաձայնեցման համար դեր է խաղում մի քանի պայման. բարդ համադասական նախադասությունների դեպքում առաջին հերթին կարևոր են բաղադրիչների հարաբերությունները (միավորական, տրոհական և այլն), բարդ ստորադասական նախադասությունների դեպքում կարեւոր են երկրորդականի բնույթը, կապակցման միջոցները, բայ-ստորոգյալի ժամանակը, երբեմն էլ կոնկրետ բառիմաստները: Օրինակ՝ *Նա մեկնում է, որ աշխատի* նախադասության բայ-ստորոգյալների

միջև կա համաձայնեցում՝ *սահմանականի անկատար ներկա-ըղձական ապառնի*: Անկատար ներկան անկատար անցյալով փոխարինելու դեպքում համաձայնեցումը վերանում է, քանի որ հնարավոր է երկու տարբերակ՝ *սահմանականի անկատար անցյալ-ըղձական ապառնի* և *սահմանականի անկատար անցյալ-ըղձական անցյալ*, ինչպես՝ *Նա մեկնում էր, որ աշխատի* և *Նա մեկնում էր, որ աշխատեր*: Այսինքն՝ այս նախադասությունների բայ-ստորոգյալների միջև ո՛չ համաձայնություն է գործում, ո՛չ համաձայնեցում, քանի որ նույն կամ տարբեր եղանակաժամանակային կարգերով դրվելը պարտադրված չէ: Թվային համաձայնություն էլ չկա, քանի որ նույն թվով դրվելը միևնույն ենթակային վերաբերելու հետևանքով է:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ համաձայնությունը առավելապես գործում է հակադրական, տրոհական հարաբերություններով բաղադրիչներ ունեցող համադասական, ինչպես նաև ժամանակի, նպատակի, պատճառի, պայմանի պարագա երկրորդական ունեցող ստորադասականների բաղադրիչների միջև, բայց ոչ միշտ, քանի որ կարևոր են նախադասության կոնկրետ իմաստը, բաղադրիչներում արտահայտված գործողությունների ժամանակային հաջորդականությունը, պատճառահետևանքային կապը, կապակցման միջոցը: Մոտավորապես նույն գործոններն են նշվում միջին հայերենի նախադասությունների համար: Մասնավորապես նպատակի պարագա երկրորդականների քննությունը կատարելիս հեղինակները նշում են. «...միջին հայերենում նպատակի պարագայական նախադասությունները կապակցող *որ, թէ* շաղկապները բառական կոնկրետ իմաստներ չունեն և շարահյուսական առումով բազմագործածական են: Հետևաբար շարահյուսական տվյալ հարաբերության դրսևորման համար այս նախադասություններում կարևոր է դառնում բառական կազմի ռեալ բովանդակությունը, ինչպես և նախադասության բաղադրիչների ստորոգյալների քերականական ժամանակը»¹²:

Անդրադառնանք նաև ազատ կապակցմանը: Այդ կապակցումը առդրական է: Սովորաբար *առդրություն* անվանումը կիրառում են նախադասության անդամների կապակցումը բնորոշելիս, սակայն այն ավելի լայն դրսևորում ունի: Ինչպես գրում է Գ. Ջահուկյանը, «Շարահյուսության կիրառման շարահյուսական եղանակը հայտնի է «առդրություն» անվամբ և կարող է հանդես գալ շարահյուսական բոլոր մակարդակներում»¹³: Առդրական կապակցության դեպքում կարևորվում են շարահյուսությունը, հնչերանգը, ինչպես նաև բառիմաստները. *հմմտ. գեղեցիկ երեխայի խաղալիքը. երեխայի գեղեցիկ խաղալիքը*: Ինչպես բառերի, այնպես էլ բարդ նախադասության բաղադրիչների առդրական կապակցության դեպքում կապակցման կարևոր միջոցները շա-

¹² «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Բ, էջ 238:

¹³ Գ. Ջահուկյան, Շարահյուսական ուսումնասիրություններ, էջ 87:

բաղասությունն ու հնչերանգ են: Բարդ նախադասության բաղադրիչների կապակցման համար կարող են գործածվել շաղկապներ, հարաբերականներ ու հարաբերյալներ, սակայն վերջիններիս միջև թվային համաձայնություն չի լինում, ինչպես նաև չի լինում եղանակաժամանակային համաձայնություն բայ-ստորոգյալների միջև: Օրինակ՝ *Նա աշխատեց այնքան, որ ավարտի աշխատանքը* նախադասության բաղադրիչների կապը առդրական է, քանի որ չկա հարաբերյալի ու հարաբերականի թվային համաձայնություն (*այնքան* հարաբերյալը թվի կարգ չունի, իսկ հարաբերական գործածված չէ), ստորոգյալների միջև չկա եղանակաժամանակային համաձայնություն (դրանք դրված են տարբեր եղանակների տարբեր ժամանակների բայաձևերով՝ սահմանականի անցյալ կատարյալ և ըղձական ապառնի), չկա նաև համաձայնեցում, քանի որ հնարավոր է ըղձական ապառնու փոխարեն գործածել ըղձական անցյալ, այսինքն՝ տարբեր եղանակների տարբեր ժամանակներով դրվելը պարտադիր պայման չէ:

Եթե ի մի բերենք վերն ասվածները, ապա կստացվի հետևյալը. բարդ նախադասության բաղադրիչների կապակցման բառական միջոցներն են *շաղկապները, հարաբերական դերանունները, հարաբերյալները*, իսկ ոչ բառական միջոցներն են *շարադասությունը* և *հնչերանգը*: Լայն առումով՝ բոլոր կապակցություններում էլ շարադասությունը միշտ առկա է, իսկ հնչերանգը հանդես է գալիս բանավոր խոսքում, բայց կապակցման մյուս միջոցների առկայության դեպքում (բառաձևեր, կապեր և շաղկապներ) առաջին հերթին այդ միջոցներն են կարևորվում, թեև թե՛ բառերի, թե՛ բաղադրիչ նախադասությունների կապակցման դեպքում չպետք է անտեսել հնչերանգի և շարադասության դերը:

Կապակցման եղանակներն են *համաձայնությունը, համաձայնեցումը* և *առդրությունը*:

Համաձայնությունը բարդ նախադասության բաղադրիչների միջև ունենում է թվային և եղանակաժամանակային դրսևորում: Թվային համաձայնության դեպքում հարբերականն ու հարաբերյալը ունենում են քերականական-թվային (*նա - ույ, նրանք - ույքեր*), իմաստաթվային (*բոլորը - ույքեր*), բազմակիությանը ու քերականական թվով (*գիրքը, տետրը, մատիտը - որոնք*) կապ: Եղանակաժամանակային համաձայնությունը դրսևորվում է բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալների՝ եղանակաժամանակային միևնույն կարգը կամ կարգերը ունենալով:

Համաձայնեցումը դրսևորվում է բաղադրիչ նախադասությունների բայ-ստորոգյալների՝ եղանակաժամանակային ոչ ընդհանուր՝ տարբեր, սակայն պարտադրված կարգեր ունենալով:

Առդրության դեպքում *հարաբերական-հարաբերյալ* թվային և բայ-ստորոգյալների *եղանակաժամանակային* կարգերի նույն կամ տարբեր լինելու պարտադրանք չկա, և դրանք կարող են փոփոխվել:

Բանալի բառեր – հանձնադրություն, բարդ հանդիսական նախադասություն, բարդ ստորադասական նախադասություն, կապակցություն, ստորոգյալ

АРТАШЕС САРКИСЯН – *Согласование личных форм глаголов между частями сложного предложения в армянском языке.* – В статье исследована связь личных форм глаголов, выявляемая при построении сложного предложения. Личные формы глаголов могут фигурировать в разных временных категориях, но в некоторых случаях наличие разных времён – обязательное условие для обеспечения связи между частями сложного предложения.

Ключевые слова: *согласование, сложносочинённое предложение, сложноподчинённое предложение, соединение, сказуемое*

ARTASHES SARGSYAN – *Agreement between the Finite Verbs of Component Parts of the Composite Sentence in the Armenian Language.* – The article studies the connection between finite verbs which is expressed between the components of the composite sentence. Finite verbs can be expressed in different temporal categories, but in some cases, it is an obligatory condition for the combination to be in different tense forms which is an important condition for ensuring the combination between parts of a complex sentence.

Key words: *agreement, compound sentence, complex sentence, combination, predicate*